

կատարուած խաչի երկրպագութեան առթիւ կը բերուէր մասնատուփը (reliquaire), ուր կը գտնուէր կենաց փայտը: Ուրեմն ան ուրիշ տեղ մը կը պահուէր, ինչպէս նաեւ խաչին արձանագրութեան տախտակը: Իսկապէս ան կը պահուէր կոստանդինեան մայր եկեղեցիին, այսինքն մատրան անդատակին աւանդատան մէջ: Հին յուշագրութիւն մը (Տե՛ս Brévarius) կ'ըսէ թէ «այս եկեղեցիին դրան ձախ կողմը կը գտնուէր ա՛յն աւանդատունը, ուր պահուած էր մեր Փրկչին խաչը»: Կ'երևի թէ աւանդատունը մօտ էր մատրան գաւիթին: Սողոմոնի կնիքը, Դաւթի օձման եղջիւրը, սկուտեղը, որուն վրայ գրուեցաւ Յովհաննէս Մկրտչի գլուխը՝ կը տեսնուէին Գողգոթայի մէջ, հաւանաբար խաչին ետեւը (post crucem): Բայց մատրան մի ուրիշ աւանդատան մէջ էր որ ուխտաւորները կը յարգէին եղեգը, սպունգը, եղնգնաքար բաժակը, զոր Յիսուս զործածեց վերջին ընթրեաց ժամանակ, եւ շատ մը ուրիշ մասունքներ: Ի մխիթարութիւն ուխտաւորաց կը խմցնէին պահուած սպունգէն քամուած ջուրը: Ս. Գերեզմանին երկրորդ ժամանակաշրջանին ճշգրիտ տեղեկութիւնները կը թոյլատրեն մեզ այս աւանդատունը դնել նոյն Բասիլիքայի վերնայարկը: Մատրան մինչև հարաւային արեւելեան անկիւնը նուիրուած էր Յիսուս Քրիստոսի մասունքներուն. հիւսիսային արեւելքը ընծայուած էր Ս. Կուսին: Հոն կը պահուէին իրեն վերաբերեալ զօտին և վարսակալը: Վերնայարկին մէջ Չարաչարանաց զործիքները աւանդատան մէջ կախուած ժամանակ Ս. Աստուածածնի մեծ նկարը կը ցուցագրուէր հոն ա՛յնպիսի կերպով մը որ արեւելեան անդատակը մտնող հաւատացեալները կարենային վարէն տեսնելու զայն: Մարիամ Եգիպտացիին պատմութեան մէջ այս նկարը ստացած է տիեզերական համբաւ մը: Յայտնի է այն դերը, զոր ան կատարեց մեղաւորուհիին զգջուամին մէջ: Այս պատկերը ըստ մեզ կը կոչուի Երաշխաւոր Ս. Աւստածածին:

Ս. Գերեզմանի շէնքերուն բուն կոստանդինոսեան շրջանը կը փակուի 4 Մայիս 614ին, այն օրը երբ Պարսիկները Ս. Քաղաքը արշաւեցին, սրբավայրերը հրդեհեցին և սրէ անցուցին այն անձերը որոնք հոն ապաստանած էին: Երբ պարսիկ բանակին զօրապետը հրամայեց կոտորածը և հրդեհը դադրեցնել, Ս. Յարուութեան եկեղեցիին մէջ գտնուեցան 212 զիակներ, 83 բոլո-